ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԱՏՎԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լատվիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Գինց Ապալսին:

Ողջունելով նորանշանակ դեսպանին՝ Նորին Սրբությունը արդյունավետ աշխատանք մաղթեց նրան երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացման գործում: «Մեր ժողովուրդները թեեւ տարածքային առումով բավականին հեռու են, սակայն, լինելով հավատակից ժողովուրդներ եւ սնվելով քրիստոնեական մշակույթի նույն ակունքներից՝ ավելի են մերձենում եւ ամրանում բարեկամության մեջ»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց երկու երկրների հարաբերություններին, ինչպես նաեւ այն մտահոգություններին, որոնք ծառացած են ոչ միայն պետության, այլեւ եկեղեցու առջեւ բարոյական արժեքների պահպանման եւ ժողովրդի մեջ տարածման հարցում:

Հանդիպման ավարտից հետո մեծարգո դեսպանն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացավ հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային հարստություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ

Դեկտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրախորհրդարանի պատգամավոր, Հայաստանի հարցերով զեկուցող Տոմաշ Պորեբային՝ ուղեկցությամբ ԱԺ պատգամավոր Արտակ Զաքարյանի:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ 1915թ. Հայոց ցեղասպանության եւ խորհրդային ասպվածամերժության տարիներին Հայ Առաքելական Եկեղեցու կրած դժվարություններին, որոնց հետեւանքները տակավին զգալի են: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Եկեղեցի-պետություն հարաբերություններին եւ այն համագործակցությանը, որ իրականացվում է տարբեր ոլորտներում՝ ի բարօրություն ժողովրդի:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ տարածաշրջանային տարբեր խնդիրների եւ դրանց հաղթահարմանն ուղղված Հայ Եկեղեցու ջանքերի մասին: Մասնավոր անդրադարձ կատարվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման, Ադրբեջանում հայկական մշակութային արժեքների ոչնչացման եւ Վրաստանում հայոց եկեղեցիների վերադարձման, ինչպես նաեւ Վիրահայոց թեմի իրավական կարգավիճակի խնդիրներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ